AMERIABANK

2020թ. առաջին կիսամյակի հաշվետվություն

Հունիս 30, 2020

բովանդակություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2020թ. առաջին կիսամյակի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները

2020թ. առաջին կիսամյակ՝ կարճ անդրադարձ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստան՝ ընդհանուր ակնարկ

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները

Ամերիաբանկի բիզնես-մոդելը և ռազմավարությունը

Ամերիաբանկի հիմնական ռազմավարական ձեռքբերումները 2020թ. առաջին կիսամյակի դրությամբ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հիմնական ռիսկեր

2020թ. առաջին կիսամյակի ամփոփ նկարագիր

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կորպորատիվ կառավարման կառուցվածքը

Տնօրենների խորհուրդ

Տնօրինություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություն

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

AMERIABANK

ընդհանուր տեղեկություններ

AMERIABANK

Ամերիաբանկ՝
համառոտ ակնարկ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն դինամիկ զարգացող բանկ է, դասվում է երկրի ամենակայուն և խոշոր ֆինանսական հաստատությունների շարքին և ունի հստակ ձևակերպված թվայնացման օրակարգ: Լինելով առաջին ներդրումային բանկը Հայաստանում՝ Ամերիաբանկն այսօր ունիվերսալ բանկ է, որը մատուցում է կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային լուծումների ամբողջական փաթեթ: Առաջնորդվելով կյանքի որակը բարելավելու առաքելությամբ՝ Ամերիաբանկն այժմ անցնում է վերափոխման գործընթաց ավելի հաճախորդակենտրոն բանկ դառնալու նպատակով՝ ընդլայնելով թվային հնարավորությունները և մշակելով նոր պրոդուկտներ և լուծումներ հաճախորդների կարիքներն ու նախասիրությունները բավարարելու համար:

2020թ. առաջին կիսամյակի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները

Ընդհանուր ակնարկ

- Կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ մատուցող խոշորագույն ունիվերսալ բանկը Հայաստանում
- 1-ինն՝ ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ ակտիվների, պարտավորությունների և կապիտալի
- Մեծ ավանդ Հայաստանի բանկային համակարգի զարգացման մեջ
- Շարունակական գնահատանք և որակի ճանաչում հեղինակավոր միջազգային հաստատությունների կողմից
- Հնարավոր ամենաբարձր վարկանիշ՝ սուվերեն վարկունակության սահմանափակումների շրջանակներում



19 մասնաճյուղ

1,083 աշխատակից

45 տերմինալ

146 բանկոմատ

2,847 POS-տերմինալ

515 վիրտուալ POS-տերմինալ

Վարկանիշ

S&P	
Երկարաժամկետ	B+
Կարճաժամկետ	B
Հեռանկարը	կայուն
SACP	bb-

Moody's	
Բանկային ավանդներ (ազգային արժույթով)	Ba3/NP
Բանկային ավանդներ (արտարժույթով)	B1/NP
BCA	ba3
CRA	Ba3(cr)/NP
Հեռանկարը	կայուն

Բաժնետիրական կառուցվածք



*Ամերիա Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդը վերանվանվել է Իմաստ Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդի:

AMERIABANK

2020թ. առաջին կիսամյակ՝ հակիրճ անդրադարձ

Առաջատարն՝ ըստ 2020թ.-ի առաջին կիսամյակի արդյունքների

1-ին **885 մլրդ Դ** ակտիվներ

2-րդ **780 մլրդ Դ** պարտավորություններ

1-ին **597 մլրդ Դ** վարկեր*

2-րդ **106 մլրդ Դ** կապիտալ

3-րդ **4.6 մլրդ Դ** շահույթ

- S&P-ն վերահաստատեց Ամերիաբանկի B+ վարկանիշը՝ կայուն հեռանկարով:
- Moody's-ը վերահաստատեց Ամերիաբանկի ազգային արժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշը՝ կայուն հեռանկարով:
- Ամերիաբանկը EMEA Finance ամսագրի կողմից ճանաչվել է 2019թ. Հայաստանի լավագույն բանկ:
- Հեռահար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում կազմեց 88%, իսկ ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակիցը՝ 43%:
- Տնօրենների խորհրդի կազմը համալրվեց երեք նոր անկախ անդամով՝ Կախա Կիկնավելիձե, Ռիչարդ Օգդոն և Տիգրան Դավթյան, որոնք փոխարինեցին Ռուբեն Վարդանյանին, Նուբար Աֆեյանին և Պիեռ Գյուրջյանին:

S&P Global Ratings

Moody's

emeafinance Europe • Middle East • Africa

*Առանց արժեզրկման մասհանումների, բայց ներառյալ առևտրի ֆինանսավորումը

Կորոնավիրուսը (covid-19) Հայաստանում

- Հայաստանում կորոնավիրուսի առաջին դեպքը գրանցվեց մարտի 1-ին:
- Մարտի 16-ին հայտարարվեց արտակարգ դրություն, գրեթե ամբողջությամբ սահմանափակվեց մարդկանց տեղաշարժը, և դադարեցվեց բոլոր ոչ հիմնական բիզնեսների գործունեությունը:
- Մայիսի 1-ից սկսած որոշ սահմանափակումներ աստիճանաբար հանվեցին: Հունիսի 1-ի դրությամբ վերականգնվել էր գրեթե բոլոր ընկերությունների գործունեությունը՝ բացառությամբ մարդկանց մեծ կուտակումներ ենթադրող ծառայությունների (կինոթատրոններ, թատրոններ, թանգարաններ, դպրոցներ և այլն): Հասարակական տրանսպորտը և պետական մանկապարտեզներն այժմ գործում են որոշ սահմանափակումներով՝ խիստ վերահսկողության պայմաններում:
- Մայիսի կեսին արձանագրվեց կորոնավիրուսով վարակվածության դեպքերի կտրուկ աճ, ինչի արդյունքում մայիսի 18-ից սկսեցին կիրառվել սոցիալական հեռավորության ավելի խիստ պահանջներ:
- COVID-19 դեպքերի քանակը հասավ գագաթնակետին հունիսի վերջին, իսկ հուլիսին սկսեց նվազել: Օգոստոսի արդեն ակտիվ դեպքերի քանակը մոտ 2 անգամ պակաս էր հուլիսի սկզբի ցուցանիշից:

Կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումները

- Կառավարությունը ներկայացրել է հակաճգնաժամային ծրագիր, որի նպատակն է ոչ միայն աջակցել բիզնեսին և տնային տնտեսություններին ճգնաժամը հաղթահարելու հարցում, այլև ապահովել հետճգնաժամային տնտեսության մրցունակությունը:
- Առաջին հակաճգնաժամային փաթեթով կառավարությունը հատկացրել է ավելի քան 150 մլրդ ՀՀ դրամ (ՀՆԱ-ի 2.3%), որն ուղղվել է բիզնեսի աջակցության տասնմեկ միջոցառումներին (մեծամասամբ ՓՄՁ-ներին և առավել տուժած ոլորտների ընկերություններին) և սոցիալական աջակցության տասներեք միջոցառումներին:

ՀՀ ԿԲ կողմից ձեռնարկված միջոցառումները

- Վերաֆինանսավորման դրույքը մարտին և ապրիլին իջեցվեց 25-ական բազիսային կետով, ապա ապրիլին արդեն իջեցվեց ևս 50 բազիսային կետով՝ կազմելով 4.5%:
- Բազել III-ով սահմանված լրացուցիչ բուֆերների կիրառումը չեղարկվեց 2020թ. Համար և իջեցվեց կապիտալի համարժեքության նորմատիվի արժեքը (Մակարդակ 1-ն իջեցվել է 10%-ից մինչև 9%):
- Բազել III-ով սահմանված իրացվելիության նորմատիվների՝ իրացվելիության ծածկույթի նորմատիվի (LCR) և զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվի (NSFR) ներդրման ժամկետը հետաձգվել է մինչև 2021թ. հունվարի 1-ը:
- Բանկերին առաջարկվել է անսահմանափակ ռեպոյի հնարավորություն և 2-ից 6 ամիս ժամկետով արտարժութային սվոփ գործարքներ:

Ամերիաբանկի կողմից Կորոնավիրուսի կանխարգելմանն ուղղված միջոցառումները

- Բիզնեսի անընդհատության ապահովման համապարփակ ծրագրի շրջանակներում Ամերիաբանկը ձեռնարկել է մի շարք քայլեր և կանխարգելիչ միջոցառումներ՝ աշխատակիցների և հաճախորդների անվտանգությունը, գործառնությունների անընդհատությունն ապահովելու և գործառնական և ֆինանսական ռիսկերը նվազեցնելու նպատակով:
- Մենք պահպանում ենք սոցիալական հեռավորության խիստ կանոններ թե թիմի ներսում, թե հաճախորդների հետ հաղորդակցման ընթացքում՝ ֆիզիկապես առանձնացնելով աշխատասեղանները, բոլոր հանդիպումներն անցկացնելով միայն առցանց եղանակով և աշխատավայրում սահմանելով վարքագծի որոշ կանոններ: Մարտից սկսած՝ հաճախորդների հետ շփում չունեցող անձնակազմի 70%–ը և հաճախորդներին սպասարկող աշխատակիցների 40%–ն աշխատում է տնից: Թիմերը, որոնք չեն կարող ամբողջությամբ անցնել հեռավար աշխատանքի, աշխատում են հերթափոխով՝ փոխվելով երկու շաբաթը մեկ:
- Հաշվի առնելով համավարակի ակնկալվող ազդեցությունը մեր հաճախորդների վրա՝ մենք մայր գումարի և տոկոսի վճարման «վարկային արձակուրդ» ենք տրամադրել բոլոր ֆիզիկական անձ հաճախորդներին և առավել տուժած ոլորտներում գործող կորպորատիվ հաճախորդներին (հյուրատնային և հանրային սննդի, տրանսպորտի ոլորտներում և այլն):
- Մենք խստացրել ենք ռիսկի չափորոշիչները, աշխատում ենք ծախսերի կրճատման ուղղությամբ և պահպանում իրացվելիության և կապիտալի համարժեքության լրացուցիչ պաշար՝ ստեղծվող իրավիճակում ճկունությունն ապահովելու համար:

ռազմավարական հաշվետվություն

AMERIABANK

Հայաստան՝ ընդհանուր ակնարկ

Ընդհանուր

ՀՆԱ՝ 13.7 մլրդ (2019, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 4,615 (2019, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
ՀՆԱ միջին իրական աճը (2013-2019)՝ 4.4%
Moody's-ի վարկանիշ՝ Ba3 (կայուն)
Fitch-ի վարկանիշ՝ BB- (բացասական)

Դիվերսիֆիկացված տնտեսություն

ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ արտադրության ճյուղերի*



ՀՆԱ և գնաճ

2013-2020թ. 1-ին կիսամյակ



Ամենակայուն արժույթը տարածաշրջանում

(ԱՄՆ դոլարի նկատմամբ տարածաշրջանի այլ արժույթների փոխարժեքների դինամիկան)**



*Վերջին 4 եռամսյակը, 2020թ. 2-րդ եռամսյակի դրությամբ

**Փոխարժեքի օրական տատանումները՝ որպես հիմք ընդունելով 2014թ. հունվար ամիսը
Աղբյուր՝ Bloomberg

AMERIABANK

Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

AMD/USD (միջին օրական)



AMD/EUR (միջին օրական)



AMD/RUB (միջին օրական)



Ընթացիկ վճարային հաշվեկշիռ*



Արտահանում և ներմուծում



Միջազգային պահուստներ



Մասնավոր փոխանցումներ**



Սպառողական գների ինդեքս
(12 ամիս)



Տնտեսական ակտիվության ինդեքս
(12 ամիս)



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկումը 2020թ. առաջին վեց ամսում կազմեց –4.7%:
- 12 ամսվա սպառողական գների կուտակային ինդեքսը 2020թ. հունիսի դրությամբ կազմեց 0.5%՝ նախորդ տարվա 2.0% համեմատ:
- 2020թ. առաջին 6 ամսում ՀՀ դրամը մի փոքր արժևորվել է ԱՄՆ դոլարի համեմատ (0.2%–ով): Վերջին 5 տարում փոխարժեքների տատանումները չէին գերազանցում 1–2%–ը:
- Ընթացիկ հաշվի պակասորդը նախորդ տարվա համեմատ մի փոքր բարելավվել է:
- Միջազգային պահուստներն ավելացել են 19%–ով:
- Մասնավոր տրանսֆերտները կրճատվել են 22%–ով (մայիսի դրությամբ)՝ նախորդ տարվա 13% աճի համեմատ: Նվազումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով և դրա տնտեսական հետևանքներով:

Աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ Կենտրոնական բանկ

*Թարմացված տվյալները դեռևս առկա չեն: Նախնական տվյալներ: ՀՀ ԿԲ վերջին գրառումները ներառված չեն:
**Փոխանցումները ներառում են ֆիզիկական անձանց՝ բանկերի միջոցով կատարվող ընդհանուր առևտրային և մասնավոր փոխանցումները:

AMERIABANK

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշերը

5 խոշորագույն բանկերն՝ ըստ ակտիվների (մլրդ ՀՀ դրամ)



5 խոշորագույն բանկերն՝ ըստ վարկերի (մլրդ ՀՀ դրամ)



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Շուկան շատ մրցակցային է. 5 առաջատարներին բաժին է ընկնում ընդհանուր ակտիվների և վարկերի համապատասխանաբար 56%-ը և 60.6%-ը:
- 3 առաջատար բանկերին բաժին է ընկնում ընդհանուր ակտիվների 43%-ը և վարկերի 46%-ը:
- 2020թ. առաջին 6 ամսում բանկային համակարգի ակտիվները և վարկերն ավելացել են համապատասխանաբար 4.2% և 6.4%-ով:

*Առանց արժեզրկման մասհանումների

Ամերիաբանկի բիզնես մոդելը
և ռազմավարությունը

2020թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում Ամերիաբանկը (այսուհետև՝ Բանկ) կարողացավ պահպանել առաջատարի դիրքն՝ ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ չնայած տարեսկզբին սկիզբ առած կորոնավիրուսի համաճարակի ու դրա արդյունքում արձանագրված տնտեսական հետևանքների: Բանկը վերահաստատեց իր ներուժը՝ որպես հաճախորդների վստահությունը վայելող ժամանակակից, կայուն, իրացվելի, դինամիկ աճող և մրցունակ ֆինանսական ինստիտուտ՝ հետագա աճի, զարգացման և մրցունակության էական հնարավորություններով: Հիմնական շեշտադրումը փոխելով մատչելի բանկային ծառայությունների հասանելիությանն ու սպասարկման որակին՝ Բանկն արդեն իսկ դիրքավորվել է որպես նորարարությամբ և սպասարկման չափանիշներով առաջատար:

Բանկն անընդհատ և հետևողականորեն կատարելագործում է աշխատանքի կազմակերպման մոդելը, կորպորատիվ կառավարման համակարգը, հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները, անընդհատ ընդլայնում է բանկային ծառայությունների փաթեթը, ձևավորում հմուտ և մասնագիտացած աշխատակազմ և ապահովում անհրաժեշտ ռեսուրսային բազա:

Բանկի համար կարևոր է ապահովել կայուն աճի հնարավարություն, որը կնպաստի նաև շուկայի մասնաբաժնի ավելացմանը: Պլանավորվում է ավելացնել նորմատիվային կապիտալը և այն օգտագործել շուկայի պահանջարկի բավարարման ուղղությամբ: Բանկն աճին զուգընթաց կարևորում է նաև երկարաժամկետ հատվածում արդյունավետությունը: Այս առումով թվային բանկինգը կարևորվում է ոչ միայն հաճախորդների բավարարվածությունն ավելացնելու նպատակով, այլև ծախսատարության կրճատման տեսանկյունից:

Ունենալով հաճախորդներին որակյալ բանկային և ներդրումային ծառայությունների համալիր փաթեթ տրամադրելու նպատակ՝ Բանկը սահմանել է հետևյալ **առաքելությունը**.

ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝

- տրամադրելով հաճախորդներին **ՄԻՁԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻ** ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- իրականացնելով հասարակության **ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ** համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման սեփական մոդել՝ **ՄԻԱՎՈՐԵԼՈՎ ՀԱՁՈՂԱԿ ՄԱՐԴԿԱՆՑ**,
- շարունակաբար **ԱՎԵԼԱՑՆԵԼՈՎ մեր ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**:

Բանկի տեսլականն է՝ դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**: Լինել թիրախային շուկաներում **ԱՌԱՋԱՏԱՐԸ** սպասարկման որակով և արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:
Բանկն իր հետագա գործունեության ընթացքում ուղղորդվելու է հետևյալ երեք հիմնական արժեքներով՝ **հաճախորդների բավարարվածության բարձր մակարդակ**, **աշխատանքի ու սպասարկման բարձր որակ**, **արհեստավարժություն և թիմային ոգի**:

Հիմնվելով վերոնշյալ արժեքների վրա՝ Բանկը կշարունակի բարելավել կառավարման համակարգը և ներդնել կառավարման մշակույթի նոր արժեքներ, որոնք ոչ միայն կնպաստեն Բանկի հետագա գործունեության բարելավմանը, այլ նաև օրինակելի մոդել կհանդիսանան այլ տնտեսվարողների համար:

Բանկն էական բիզնես ուղղություններ է համարում.

· ՓՄՁ ուղղության զարգացում, հիփոթեքային վարկավորման աճը,

· օնլայն բանկինգից օգտվող հաճախորդների մասնաբաժնի ավելացումը, թվային պրոդուկների և ընտրված էկոհամակարգերի ներդրումը,

· քարտերի քանակի աճը:

Իր գործունեության զարգացման ներկայիս փուլում Բանկն էլ ավելի է արժևորում տեղեկատվության/վերլուծությունների հիման վրա որոշումների կայացման կարևորությունը: Այս առումով Բանկը նախաձեռնել է համապատասխան տեղեկատվական բազաների կառուցման և դրանց հիման վրա կիրառական վերլուծությունների ավելի ինտենսիվ իրականացման նախագծեր: Բացի տեղեկատվության կարևորումից, Բանկի ղեկավարության համար առանձնացվել են ռազմավարական ուշադրությանն արժանի հինգ հիմնական անկյունաքարեր.

- Լինել շուկայի առաջատարը. ապահովել մրցակիցների համեմատ առաջանցիկ օրգանական աճի տեմպեր և միևնույն ժամանակ շարունակել դիտարկել ոչ օրգանական աճի հնարավորությունները: Շուկայի առաջատարությունն ապահովելու նպատակով Բանկն ակնկալում է առավել մեծ ուշադրություն դարձնել կապիտալի արդյունավետ օգտագործմանը, շարունակելու է խթանել գործառնական բանկային ծառայությունները, ինչպես նաև ելնելով ներկայիս դեմոգրաֆիական իրավիճակից և հաշվի առնելով բանկային ծառայությունների ներկայիս ծածկույթը՝ Բանկը կարևորում է մոտակա երեք տարիների ընթացքում էականորեն ավելացնել նոր հաճախորդների քանակը, էապես բարելավել գործող հաճախորդներին խաչաձև վաճառքները:

- Բարձրացնել արդյունավետությունը. ապահովել կապիտալի շահութաբերության պատշաճ, ինչպես նաև ծախսերի և եկամուտների հարաբերակցության գործակցի առավել ցածր մակարդակ: Արդյունավետության բարձրացման ապահովման նպատակով Բանկը նախատեսում է մի շարք նախագծերի իրականացում, որոնք ուղղված կլինեն ներքին գործընթացների և գործառույթների ավտոմատացմանը, կառուցվածքային և բիզնես մոդելի օպտիմալացմանը, ինչն էլ իր հերթին դրական ազդեցություն կունենա արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

- Ընդլայնել **թվայնացման** ծավալները. դառնալ հեռահար բանկային ծառայություններ մատուցող առաջատար բանկ՝ հնարավորինս ավտոմատացնելով գործընթացները: Բանկ արդեն իսկ իրականացնում է, ինչպես նաև ապագայում նախատեսում է իրականացնել մի շարք նախագծեր, որոնք մեծապես կնպաստեն թվային կապուղիների ընդլայնմանը, մի շարք պրոդուկտներ կթվայնացվեն, նախատեսվում է վճարման նոր տեխնոլոգիաների կիրառում: Այդ ամենը կնպաստի թվայնացման ծավալների ավելացմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի հաճախորդների փորձառության բարելավմանը:

- Բարձրացնել **դիվերսիֆիկացիայի** աստիճանը. հիմնական շեշտը դնել մանրածախ և ՓՄՁ ծառայությունների պորտֆելների և գործառնական բանկային ծառայությունների ընդլայնման վրա: Դիվերսիֆիկացիան բարձրացնելու նպատակով Բանկը նախատեսում է գալիք տարիների ընթացքում ըստ հաճախորդների կարիքների վերանայել Բանկի ներքին բիզնես գործընթացները և առաջարկվող ծառայությունները:

- Ընդլայնել **հաճախորդների փորձառությունը**. լինել հաճախորդակենտրոն Բանկի գործունեության բոլոր ուղղություններում, ապահովել հաճախորդների լոյալության և հաճախորդների փորձառության ինդեքսի ամենաբարձր ցուցանիշները: Բանկը մշտապես ներդրումներ է կատարում Բանկի անձնակազմի վերապատրաստումներում: Վերապատրաստումները կնպաստեն անձնակազմի հաղորդակցման հմտությունների կատարելագործմանը, հաճախորդներին կմատուցվի առավել որակյալ սպասարկում, և այս բոլոր գործողությունները կնպաստեն հաճախորդների բավարարվածության բարձրացմանը:

Բանկի միջնաժամկետ քանակական և որակական նպատակները բխում են առաջատար ունիվերսալ բանկ դառնալու ռազմավարական զարգացման ուղղությունից, Բանկի առաքելությունից, ուժեղ և թույլ կողմերից:

Իր զարգացման ներկա փուլում Բանկը նաև առաջնահերթություն է տալիս **տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը**: Այդ նպատակով Բանկը սկսել է ավելի ճկուն և համապարփակ դարձնել իր տվյալների բազաները, այսպիսով որոշումների կայացման հիմքում ավելի մեծ տվյալներ և ընդգրկուն վերլուծություններ դնելու նպատակով:

Կարճաժամկետ հատվածում պլանավորումը հիմնականում կատարվել է՝ ելնելով COVID-19-ի արդյունքում ստեղծված իրավիճակից: Դա իր մեջ ներառում է համապատասխան գնահատականներ թե՛ համաճարակի առողջապահական մասշտաբների, թե՛ տնտեսական հավանական ազդեցության գնահատումը: Առաջիկայում Բանկի գործունեությունը նպատակաուղղվելու է որակապես նոր ծառայությունների տրամադրմանը, ակտիվային գործառնությունների հուսալիության բարձրացմանը և դրանով իսկ ներդրողների և ավանդատուների շահերի առավելագույնս պաշտպանմանը:

Բանկի գործունեությունը մեծապես պայմանավորվում է **արտաքին միջավայրում տեղի ունեցող իրադարձություններով**: Բանկը սեփական և հաճախորդների կարիքները բավարարելու համար գործունեություն է ծավալում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Բանկի գործունեության վրա իրենց ուրույն ազդեցությունն են թողնում և՛ հայրենական, և՛ միջազգային հարթակներում տեղի ունեցող իրադարձությունները: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ ներկայումս ամբողջ աշխարհում լրացուցիչ անորոշություն է ձևավորվել, սակայն ակնհայտ է, որ գլոբալ համաճարակը զգալի ազդեցություն է թողնում մարդկանց վարքագծի և տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա:

Այսպես, Բանկի գործունեության վրա էական ազդեցություն են թողնում՝

- կորոնավիրուսի համավարակով պայմանավորված համաշխարհային տնտեսության, այդ թվում նաև հիմնական առևտրային գործընկերների անկայուն տնտեսական իրավիճակը, ոչ այնքան դրական սպասումները, զարգացման հնարավոր տարբերակների ոչ միանշանակ լինելը,

- ՀՀ արտաքին առևտրի մեջ էական կշիռ ունեցող ապրանքատեսակների (պղինձ, նավթ, ցորեն) գների վարքը,

- միջազգային շուկաներում տոկոսադրույքների սպասելի անկումը, ինչպես նաև գրեթե բոլոր կառավարությունների ակտիվ տնտեսական ծրագրերը, որոնք ահռելի լրացուցիչ իրացվելիություն են ներարկել,
- ՀՀ տնտեսության մի շարք ճյուղերի սպասվելիք զգալի անկումները (կացության և հանրային սննդի, տուրիզմի, անշարժ գույքի հետ կապված գործունեություն և այլն), ինչպես նաև արտակարգ իրավիճակի սահմանափակումները (թե՛ ֆիզիկական անձանց տեղաշարժի, թե՛ տնտեսական գործունեությունների վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու մասով),
- բանկային համակարգում մրցակցության պահպանումը և հաճախորդների կարիքների որոշակի փոփոխությունները:

Բանկն անընդհատ իրականացնում է ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարում, որպեսզի կարողանա չեզոքացնել վերը նշված երևույթների հնարավոր բացասական ազդեցությունը և հնարավորինս օգտվել շուկայի ընձեռած հնարավորություններից:

Արտաքին գործոնների հետ կապված սպասումները ոչ միանշանակ են՝ պայմանավորված համավարակի զարգացման այլընտրանքների նկատմամբ համաձայնության բացակայությամբ: Թե՛ համաշխարհային խաղացողների և թե՛ Հայաստանի հիմնական առևտրային գործընկերների ընդհանուր տնտեսական աճի վերաբերյալ, առանձնացվում են հնարավոր զարգացման տարբեր հեռանկարներ՝ փոքր, բայց դրական աճից մինչև խորը տնտեսական անկում՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակի հետագծով: Համեմատաբար թարմ կանխատեսումների համաձայն՝ 2020թ. ակնկալվում է համաշխարհային տնտեսության մոտ 2-4.5% անկում՝ ավելի զգալի զարգացած երկրների և համեմատաբար ավելի թույլ զարգացող երկրների համար: Միևնույն ժամանակ և՛ Հայաստանի, և՛ Բանկի համար նշանակալի կարևորություն ներկայացնող պղնձի գների կայուն աճի միտում է նկատվում վերջին ամիսների ընթացքում՝ չնայած 2020թ. 1-ին եռամսյակում Covid-19-ի ազդեցությամբ պայմանավորված զգալի անկման: Որոշակի աճի միտում է նկատվում նաև նավթի գներում: Ինչ վերաբերում է ոսկու գներին, ապա տարեսկզբից ձևավորված աճի միտումը շարունակվում է պահպանվել:

2019թ. ՀՀ ՀՆԱ իրական աճը կազմել է 7.6% (2007թ.-ից ի վեր արձանագրված ամենաբարձր ցուցանիշը): 2020թ. 1-ին կիսամյակը ինչպես ամբողջ աշխարհի այնպես էլ Հայաստանի համար առանձնացավ տնտեսության նկմամբ: 2020թ. առաջին կիսամյակում ՀՀ ՀՆԱ-ն նվազել է 5.7%-ով: Միջազգային կազմակերպությունների կանխատեսման համաձայն՝ 2020թ. կգրանցվի ՀՀ ՀՆԱ-ի 1.5-3.5% անկում: ՀՀ ԿԲ կանխատեսման համաձայն ցուցանիշը կկազմի -4%: 2020թ. 1-ին կիսամյակում միջին գնաճը կազմել է 0.5% (սպառողական գների ինդեքս՝ 12-ամսյա միջին): Կանխատեսումների համաձայն 2020թ. ցուցանիշը կպահպանվի ՀՀ ԿԲ կողմից սահմանված գնաճի տարեկան թիրախային ցուցանիշի (4%±1.5%) սահմաններում: ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը 2020թ. թվականին ևս, չնայած Covid-19-ով պայմանավորված տնտեսական իրավիճակով, եղել է կայուն՝ կազմելով 483.5 դրամ: Փոխարժեքի կտրուկ էական տատանումներ 2020թ. առաջիկա ամիսներին ևս չեն սպասվում:

Միջնաժամկետ նպատակներ

	Միջնաժամկետ նպատակներ	Փաստացի
Կապիտալի եկամտաբերություն	> 15%	8.8%
Ծախսերի հարաբերությունը եկամտին	< 40%	40%
Վարկային պորտֆելի աճ*	երկնիշ	6.3%
Մանրածախ + ՓՄՁ՝ մասնաբաժինը	> 40%	51%
Մանրածախ + ՓՄՁ՝ աճը*	> 15%	35.5%
Չաշխատող վարկեր	< 5%	4.2%

*Տարեկան կտրվածքով

Ամերիաբանկի հիմնական ռազմավարական ձեռքբերումները 2020թ. առաջին կիսամյակի դրությամբ

Բազմաֆունկցիոնալ հարթակ, հեռահար սպասարկման ավելի շատ հնարավորություններ



94% տարեկան
Ինտերնետ-բանկինգ համակարգի օգտատերեր

172% տարեկան
Գործարքներ ինտերնետ- բանկինգ համակարգով

33% տարեկան
Գործարքներ վճարային տերմինալներով

94% տարեկան
Գործարքներ վիրտուալ POS-տերմինալներով

Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից



Բեռնաթափման գործակից*



*Հեռահար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում

AMERIABANK

սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ

Ամբողջությամբ ավտոմատացված սքորինգային օնլայն վարկեր (սպառողական)



Սքորինգային վարկերի մասնաբաժինն սպառողական վարկերի ընդհանուր թվում

որից

52%

Առցանց տրամադրված սքորինգային վարկերի մասնաբաժինը



Սքորինգային վարկերի մասնաբաժինն սպառողական վարկերի ընդհանուր ծավալում

որից

40%

Առցանց տրամադրված սքորինգային վարկերի մասնաբաժինը

Ամբողջությամբ ավտոմատացված սքորինգային օնլայն վարկեր (ՓՄՁ)



Սքորինգային ՓՄՁ վարկերի մասնաբաժինը մինչև 10 մլն ՀՀ դրամի չափով բիզնես վարկերի ընդհանուր թվում

որից

24%

Առցանց տրամադրված ՓՄՁ սքորինգային վարկերի մասնաբաժինը



Սքորինգային ՓՄՁ վարկերի մասնաբաժինը մինչև 10 մլն ՀՀ դրամի չափով բիզնես վարկերի ընդհանուր թվում

որից

43%

Առցանց տրամադրված ՓՄՁ սքորինգային վարկերի մասնաբաժինը

*2020թ. առաջին կեսի դրությամբ

Նորարար և միտումների թելադրող

	Հաճախորդների գերազանց սպասարկում և բարձր բավարարվածություն	Առցանց շուկայական հարթակներ/ էկոհամակարգեր	Բիզնեսի պատասխանատու վարում և ներդրում հասարակության բարօրության գործում
Ընթացիկ ծրագրեր	NPS՝ 72% CEI*՝ 9.5	**Էկոհամակարգերի ներդնում** ▪ Ավտոշուկա ▪ Հիփոթեքային շուկա ▪ ՓՄՁ էկոհամակարգեր	**2019թ. ԿՍՊ ծրագրերին հատկացվել է 124 մլն ՀՀ դրամ:** Մշակութային և կրթական ծրագրեր, երեխաների առողջության պահպանման և համայնքի զարգացման ծրագրեր
Միջնաժամկետ նպատակներ	NPS ≥ 70% CEI ≥ 9.3	**Էկոհամակարգերի շուկայի ծածկույթի գործակից** ≥ 50%	**Բնապահպանական, սոցիալական և կառավարման բարձր չափանիշների պահպանում և ներդնում** **«Կանաչ» պարտատոմսերի թողարկում**

*CEI՝ Հաճախորդների փորձառության գործակից, որի առավելագույն արժեքը 10 է

ռիսկերի կառավարում

AMERIABANK

հիմնական
ռիսկեր

Մակրոտնտեսական ռիսկեր

2020թ.-ի առաջին կիսամյակում ՀՀ տնտեսությանը էական հարված հասցրեց նոր կորոնավիրուսի համաճարակը, որի հիմնական ուղղակի հետևանքներն էին՝ ներքին սպառման կրճատումը, գործազրկության էական աճը և սպասարկման ոլորտի անկումը: Բանկային համակարգի վրա ճնշում ավելացրեց նաև նավթի գների կտրուկ նվազումը միջազգային շուկայում, ինչը, մնացած գործոններին գումարվելով, էական ճնշում ստեղծեց տեղական արժութային և պարտքի շուկաներում: Բանկային համակարգում ռիսկերի աճը որոշակիորեն մեղմվեց մի կողմից՝ ՀՀ ԿԲ կողմից արտարժութային իրացվելիության ապահովմամբ, դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների փոփոխության և վարկառուներին «արձակուրդների» տրամադրման միջոցով, մյուս կողմից՝ տնտեսական ակտիվության նվազմամբ պայմանավորված վարկերի և արտարժույթի հանդեպ պահանջարկի կրճատմամբ:

Մակրոտնտեսական միջավայրի սպասումները մինչև տարեվերջ հիմնականում դրական են, անորոշության զգալի մասը կապված է համաճարակային իրավիճակի հետագա զարգացումների, ԱՄՆ, Չինաստանի և Եվրամիության երկրների տնտեսությունների վերականգնման միտումների հետ: (ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների մասին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս «Ռազմավարական հաշվետվություն» բաժինը):

Ամերիաբանկը 2020թ.-ի առաջին կիսամյակում գործում էր սահմանված ռիսկի ախորժակի շրջանակներում. ամենահավանական սցենարներով հաշվարկած սթրես թեստերը և կանխատեսումները ցույց են տալիս, որ 2020 թվականի ընթացքում ռիսկերի մակարդակը չի գերազանցի նախանշված սահմանաչափերը՝ տնտեսական իրավիճակին համահունչ սահմանված ֆինանսական թիրախային ցուցանիշների ապահովման դեպքում:

Վարկային ռիսկ

Ամերիաբանկի չաշխատող վարկերի ցուցանիշը (ըստ ՖՀՄՍ մեթոդաբանության) կազմել է 4,2%, որը չի գերազանցում Բանկի կողմից սահմանված ընդունելի մակարդակը: Կորպորատիվ վարկերի պորտֆելում այդ ցուցանիշը կազմել է 5.5%, իսկ մանրածախ վարկերի պորտֆելում՝ 1.9:

Ոլորտային կենտրոնացման տեսակետից, ամենախոշոր մասնաբաժինը առևտրի ոլորտում է, ինչը չի գերազանցում վարկային պորտֆելի 18%-ը:

Առաջին կիսամյակում, հիմնական ռիսկի աղբյուր են հանդիսացել COVID-19-ի հետ կապված տնտեսական սահմանափակումները և բացասական միտումները: Առաջացած վարկային ռիսկը կառավարելու նպատակով 2020թ. 1-ին կիսամյակի ընթացքում Բանկը իր հաճախորդներին առաջարկել է վարկային արձակուրդներ, պայմանների վերանայում, ինչպես նաև մասնակցել է Կառավարության կողմից սահմանված ֆինանսական աջակցման ծրագրերին՝ հնարավորինս նվազեցնելով առաջացած վարկային ռիսկերը: Համավարակին ամենազգայուն կացության և հանրային սննդի ոլորտի մասնաբաժինը վարկային պորտֆելում չի գերազանցում 8%:

Ստեղծված իրավիճակում Բանկը կառավարում է առկա և ակնկալվող վարկային ռիսկերը՝ ապահովելով պլանային ցուցանիշները:

Շուկայական ռիսկեր

2020թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով շուկայական ռիսկերից առաջացած վնասները չեն գերազանցել տվյալ գծով սահմանված ռիսկի ախորժակի 40%-ը:

Վնասների միակ աղբյուրը արտարժութային ռիսկն է եղել, որի շոշափելի ազդեցությունը նկատվել է առաջին եռամսյակի վերջում, սակայն կուտակված վնասները ծածկվել են փոխարկումների արդյունքում գոյացած հավելյալ եկամտաբերությամբ: Բանկը որդեգրել է պահպանողական մարտավարություն արտարժութային դիրքերի կառավարման ուղղությամբ. բաց դիրքի ընդունելի մեծությունը չի գերազանցում Բանկի կապիտալի 4%-ը, իսկ փոխարժեքի բարձր տատանողականության հետևանքով առաջացող հնարավոր վնասները փոխհատուցվում են՝ առքի ու վաճառքի գների տարբերության ընդլայնմամբ պայմանավորված, հավելյալ եկամուտների հաշվին:

Տոկոսադրույքի ռիսկի տեսակետից միտումները դրական են եղել՝ պայմանավորված տոկոսադրույքների նվազմամբ՝ թե գլոբալ շուկայում, և թե ՀՀ ներքին շուկայում: Ընթացիկ տարվա համար հաստատված ռիսկի ախորժակը բավարարում է տոկոսադրույքի շուրջ 3 տոկոսային կետի զուգահեռ աճի սթրեսային սցենարին:

Արժեթղթերի պորտֆելի ռիսկը 2020թ. առաջին կիսամյակում չի գերազանցել հատկացված ռիսկի ախորժակը և կառավարվել է սահմանափակ դյուրացիայի (˜3.5տարի) և սահմանափակ կենտրոնացումների պայմաններում: Բանկի արժեթղթերի պորտֆելը բաղկացած է առավելապես ՀՀ պետական պարտատոմսերից (շուրջ 90%), ինչն էապես նվազեցնում է պորտֆելում վարկային ռիսկը: Հաշվի առնելով պարտքային շուկայում ձևավորված միտումները, ինչպես նաև պորտֆելի ռիսկայնության մակարդակը՝ ընթացիկ տարվա արդյունքներով ռիսկի ախորժակի գերազանցում չի սպասվում:

Իրացվելիության ռիսկ

Բանկը իրացվելիության բարձր մակարդակ է ապահովել կիսամյակի ընթացքում. սահմանված բոլոր գործակիցներն նույնիսկ ամենաբացասական սթրեսային սցենարների դեպքում համապատասխանում են ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին: 2020թ.-ի երկրորդ եռամսյակում հաճախորդներին տրամադրված վարկային «արձակուրդները» ունեցել են ոչ էական ազդեցություն՝ ընդհանուր իրացվելիության նորմատիվի 1 տոկոսային կետի սահմաններում: Նշված ազդեցությունը մեղմվել է նաև, տնտեսական ակտիվության նվազմամբ պայմանավորված, վարկերի հանդեպ պահանջարկի էական կրճատմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բանկի ավելցուկային իրացվելիության մակարդակը միջինում գերազանցել է 120 մլրդ դրամը, ինչը բավարար է ցպահանջ ավանդների և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ավելի քան 30%-ի ակնթարթային արտահոսքի դեպքում. վերջինս շատ քիչ հավանական է նույնիսկ ամենածանր տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Գործառնական ռիսկեր

Ներքին գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ բանկը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա: 2020թ. 1-ին կիսամյակի կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել Բանկում գործառնական վնասի համար սահմանված կորուստների ընդունելի չափի 1%-ը:

ՀՀ-ում կորոնավիրուսի (COVID-19) տարածմամբ պայմանավորված՝ Բանկը, Արտակարգ իրավիճակում գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականության համաձայն, գործողություններ է իրականացրել՝ համաճարակի հետևանքների հնարավոր սցենարների վերլուծության, ռիսկերի գնահատման և կառավարման ուղղությամբ, մշակել և ներդրել է տարբեր սթրեսային իրավիճակներին համահունչ վերականգնման ծրագիր, որում, մասնավորապես, ամփոփված են նշված հնարավոր սցենարները, ձեռնարկվող միջոցառումները, պատասխանատու մարմինների շրջանակը և այլն:

Բանկի բոլոր համակարգերը հիմնականում գործում են ընդունելի ռիսկի պայմաններում: Գործառնական ռիսկը ընդունելի մակարդակում է և սահմանված ռիսկի ախորժակի գերազանցում չի ակնկալվում 2020թ. ընթացքում:

Երկարաժամկետ հորիզոնում էական գործառնական ռիսկի աղբյուր է դառնում կիբերհանցագործությունների ավելացումը ամբողջ աշխարհում, որը թիրախավորում է առաջին հերթին հենց բանկային ոլորտը: Համացանցի և բջջային հավելվածների միջոցով իրականացվող առևտրի ծավալի աճին զուգահեռ ողջ աշխարհով մեկ աճում է նաև քարտային զեղծարարությունների թիվը: Բանկային բիզնեսի թվային վերափոխման միտումներով պայմանավորված՝ հնարավոր է նաև գործառնական ռիսկերի և տեղեկատվական անվտանգության ռիսկերի հետ կապված դեպքերի քանակային աճ: Այս ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով՝ ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ տեղեկատվական տեխնոլոգիաները, ՏՏ անվտանգության ապահովման մեխանիզմները, տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերը, ընթացիկ պրոյեկտները և նոր ներդրված համակարգերը:

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր

Ամերիաբանկ ՓԲԸ-ը, կարևորելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարումը, իր գործունեության ընթացքում ապահովում է շրջակա միջավայրի և սոցիալական օրենսդրական պահանջների համապատասխանություն և միջազգային լավագույն փորձի ներդրում:

Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնահատումն իր մեջ ներառում է նաև շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատում, ինչի արդյունքում Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը գտնվում են կառավարելի մակարդակում: Բանկի կողմից չեն ֆինանսավորվում այն ծրագրերը, որոնցում առկա են շրջակա միջավայրի կամ սոցիալական էական ռիսկեր, ինչպես նաև օրենսդրությամբ և միջազգային ստանդարտներով սահմանված արգելված գործունեությունները:

Այլ ռիսկեր

Բանկի ֆինանսական վիճակի վրա հաշվետու ժամանակաշրջանում էական ազդեցություն չեն գործել համբավի, իրավական և բիզնես մոդելի (մարտավարության) ռիսկերը: Ի շնորհիվ Բանկում ներդրված գործընթացների՝ համակարգերի նշված ռիսկերը կառավարվել են պատշաճ մակարդակով և բացասական սպասումներ ընթացիկ տարվա ընթացքում չեն ձևավորվել:

2020թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

2020թ.-ի առաջին կիսամյակում բանկը գործել է սահմանված ռազմավարական ռիսկի ախորժակի շրջանակներում: Կրած կորուստների չեն գերազանցել կապիտալի նախատեսված մասնաբաժինը: Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը գտնվել է ընդունելի մակարդակում՝ ողջ ժամանակահատվածի համար:

2020թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում վնասների հիմնական աղբյուրն է եղել վարկային ռիսկը, այլ աղբյուրներից կուտակված վնասները չեն ունեցել որևէ զգալի ազդեցություն Բանկի ֆինանսական վիճակի վրա:

կառավարման հաշվետվություն

AMERIABANK

Կորպորատիվ կառավարման կառուցվածքը

Կորպորատիվ կառավարումն Ամերիաբանկում ըստ էության միտված է հավասարակշռելու Բանկի բաժնետերերի, Տնօրենների Խորհրդի, գործադիր ղեկավարության և այլ շահագրգիռ անձանց շահերը, սահմանելու կորպորատիվ հարցերով որոշումներ կայացնելու կանոններն ու ընթացակարգերը, ինչպես նաև ներդնելու կորպորատիվ կառավարման այնպիսի համակարգ, որը թույլ կտա ստեղծել վստահության, թափանցիկության և հաշվետվողականության միջավայր ու կնպաստի անհրաժեշտ երկարաժամկետ ներդրումների, ֆինանսական կայունության և աճի խթանմանը:

Ամերիաբանկը շարունակաբար կատարելագործում է իր կորպորատիվ կառավարման համակարգը՝ համապատասխանեցնելով այն միջազգային լավագույն փորձին և կիրառելի օրենսդրական և կանոնակարգային պահանջներին:

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը ներառում է հետևյալ մարմինները. Բաժնետերերի ընդհանուր ժողով (Բանկի կառավարման բարձրագույն մարմինը), Տնօրենների խորհուրդ, Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ, Տնօրինություն և Գլխավոր տնօրեն:



տնօրենների խորհուրդ

Անդրեյ Մկրտչյան

Տնօրենների խորհրդի նախագահ

Ունի ներդրումային և կառավարման ոլորտներում խորհրդատվության ավելի քան 20 տարվա փորձ, Հայաստանում ներդրումաբանկային ոլորտի հիմնադիրներից է, մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհրդի անդամ:

Լինդսի Մ. Ֆորբս

Տնօրենների խորհրդի անդամ

Ավելի քան 35 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում, որից ավելի քան 20 տարին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում (ՎԶԵԲ): Նախքան ՎԶԵԲ տեղափոխվելը 13 տարի աշխատել է British Linen Bank-ում՝ Bank of Scotland-ի՝ ներդրումային բանկային գործունեության մեջ մասնագիտացող դուստր ընկերությունում:

Ֆիլիպ Լինչ

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ավելի քան 30 տարվա փորձ ֆինանսների բնագավառում, որից 20 տարուց ավել՝ Lehman Brothers ընկերությունում ղեկավար պաշտոններում: Զբաղեցրել է Nomura-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը Մերձավոր Արևելքի, Ասիա-Խաղաղ օվկիանոս տարածաշրջանի և Աֆրիկայի գծով, իսկ այժմ Stem Capital Partners ընկերության (ուղղակի ներդրումներով զբաղվող անկախ ընկերություն) հիմնադիր գործընկերն է:

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Շուրջ 30 տարվա փորձ համաշխարհային մակարդակով ակտիվների կառավարման ոլորտում, մասնագիտանում է զարգացող շուկաների ներդրումային ֆոնդերում, եղել է «Ֆիդելիթի Ինվեսթմենթս» ընկերության՝ զարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահը և ընկերության պորտֆելի կառավարիչ:

Ռիչարդ Փ. Օգդոն

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ավելի քան 30 տարի ֆինանսական ոլորտում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ ներդրումային բանկերում, ակտիվների կառավարման և խորհրդատվական ընկերություններում (UBS Warburg, Uralsib և այլն), ներկայումս TRDATA SS ընկերության գործադիր տնօրենն է:

Կախա Կիկնավելիձե

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ավելի քան 25 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկերում, երկար ժամանակ եղել է Bank of Georgia Group-ի՝ Վրաստանի առաջատար ֆինանսական հաստատության տնօրենների խորհրդի անկախ անդամ, հետագայում՝ գործադիր տնօրեն: Զբաղեցրել է բարձր ղեկավար պաշտոններ UBS-ում, Rioni Capital-ում և այլ ֆինանսական հաստատություններում:

Տիգրան Դավթյան

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Գրեթե 30 տարվա փորձ ֆինանսական ոլորտում: Ղեկավար պաշտոններ է զբաղեցրել մի շարք առևտրային բանկերում և ավելի քան 8 տարի աշխատել որպես գլխավոր գործադիր տնօրեն: Ղեկավար պաշտոններ է զբաղեցրել նաև ՀՀ Կենտրոնական բանկում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովում:

տնօրինություն

Արտակ Հանեսյան

Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն

Ակնառու բանկիր՝ Հայաստանի առևտրային բանկերում ավելի քան 25 տարվա փորձով: Ամերիաբանկի գլխավոր տնօրենն է 2008թ-ից, մինչ այդ ևս զբաղեցնում էր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ գլխավոր տնօրենի տեղակալի և գլխավոր տնօրենի պաշտոններ ՀՀ բանկային համակարգում:

Գևորգ Թառումյան

Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն

Ավելի քան 25 տարի ՀՀ բանկային ոլորտում, այդ թվում՝ շուրջ 20 տարի ֆինանսական տնօրենի պաշտոնում ինչպես հայկական, այնպես էլ Հայաստանում ներկայացված արտասահմանյան բանկերում: Ամերիաբանկի ֆինանսական տնօրենն է 2012թ-ից:

Գագիկ Սահակյան

Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն

Շուրջ 10 տարվա փորձ կորպորատիվ բանկային գործառնությունների և 15 տարվա փորձ՝ կառավարման խորհրդատվական ծառայությունների ոլորտում: Մասնագիտական ուղին սկսել է «Ամերիա» ՓԲԸ-ում, որը մի քանի տարի ղեկավարելուց հետո ստանձնել է կորպորատիվ բանկային գործունեության գծով տնօրենի պաշտոնն Ամերիաբանկում (2010թ-ից):

Արման Բարսեղյան

Տնօրենների խորհրդի անկախ անդամ

Ավելի քան 20 տարվա փորձ մանրածախ բանկային գործունեության ոլորտում ՀՀ առևտրային բանկերում, որից 15 տարին «HSBC Բանկ Հայաստան»-ում: Ամերիաբանկի մանրածախ բանկինգի տնօրենի պաշտոնն ստանձնել է 2012թ.:

Արմինե Ղազարյան

Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն

Շուրջ 20 տարի ՀՀ բանկային համակարգում, որից 15 տարին մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ոլորտում: 2008թ-ից զբաղեցնում էր Ամերիաբանկի ՄՌԿ բաժնի ղեկավարի պաշտոնը, իսկ տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրենի պաշտոնն ստանձնել է 2019թ-ին:

Անդրանիկ Բարսեղյան

Ռիսկերի կառավարման գծով տնօրեն

Շուրջ 25 տարվա փորձ ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման և տեխնոլոգիաների ավտոմատացման ոլորտում: Ամերիաբանկի Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարի պաշտոնն ստանձնել է 2009թ-ին:

Գոհար Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

Շուրջ 30 տարի հաշվապահական հաշվառման ոլորտում՝ առանցքային պաշտոններում, ինչպես Կենտրոնական բանկում, այնպես էլ առևտրային բանկերում, այդ թվում՝ ավելի քան 10 տարի որպես գլխավոր հաշվապահ Ամերիաբանկում:

Ֆինանսական հաշվետվություն

ավելին

AMERIABANK

հաշվետու թողարկողի պատասխանատու առձանց հայտարարություն

AMERIABANK

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 2,
Հեռախոս՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Թողարկող/՝ 2020թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են և բոլոր էական առումներով համապատասխանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/04-ի պահանջներին:

2. Ներկայացված՝ 2020թ. աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2020թ. հունիսի 30-ի դրությամբ, ինչպես նաև Թողարկողի գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար:

Արտակ Հանեսյան	**Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն**	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**
Գևորգ Թառումյան	Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**
Գոհար Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**
Գագիկ Սահակյան	*Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն*	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**
Արման Բարսեղյան	*Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի տնօրեն*	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**
Արմինե Ղազարյան	*Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն*	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**

Անդրանիկ Բարսեղյան	*Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն*	
(անուն, ազգանուն)	**(պաշտոն)**	**(ստորագրություն)**